ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/35

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2018թ. թիվ 03/26-3/5176-18 գրությամբ «ՍիՓիէս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 19.03.2018թ. թիվ 28-8-417 գրության հիման վրա, 22.03.2018թ. թիվ 03/26-3/5176-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «ՍիՓիէս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՍԻՓԻԷՍ օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«ՍԻՓԻԷՍ օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն 30.03.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ ռեգուլյարի բենզինի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԻՓԻԷՍ օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն:

«ՀՀԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 06.03.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «ՀՀԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել «ՍԻՓԻԷՍ օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին:

ՀՀ ԱՎԾ-ն նույն օրը՝ որոշում է կայացրել 06.03.2018թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Գնահատող հանձնաժողովի 14.03.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի համաձայն՝ «ՀՀԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում տեղեկատվություն չի տրամադրվել:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «ՍԻՓԻԷՍ օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին և առաջարկել կնքել գնման պայմանագիր:

15.03.2018թ. սահմանված ժամկետից ուշ, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ՀՀ ԱՎԾ-ին ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի, Ընկերությունը հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 3 575 229 ՀՀ դրամի չափով:

ՀՀ ԱՎԾ-ն Ընկերությանը տեղեկացրել է անհամապատասխանության մասին և տվել տեղեկատվություն ճշգրտման ժամկետ՝ մինչև 17.03.2018թ. ներառյալ: Ընկերությունը հայտը ներակայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության մասին ճշգրտված տեղեկատվություն չի ներկայացրել:

Վերոնշված ժամկետանց հարկային պարտավորության վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն 17.03.2018թ. համապատասխան գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժին:

Ի պատասխան «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի 17.03.2018թ. գրության՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 23.03.2018թ. պատասխանել է, որ Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունը /3 575 229 դրամ տույժի գումար/ առաջացել է 28.02.2018թ.-ին 2017թ. դեկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի հաշվարկի ճշգրտելու արդյունքում, որը այնուհետև վերահաշվարկվել և զրոյացել է՝ 07.03.2018թ. նույն ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկը կրկին ճշգրտելու արդյունքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. Խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի

կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. Որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. Հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

«ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ բավարարում է մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունները ստուգելու նպատակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե համապատասխան հարցում է ներկայացվել: Արդյունքում արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված վերը նշված հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, այլ կերպ ասած, առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքը, որի պարագայում Ընկերությունը չի կարող մասնակցել գնումների գործընթացին:

Ընկերությունը գտնում է, որ համապատասխան հայտարարությունն իրականությանը չհամապատասխանող գնահատվելու դեպքում չի կարող արձանագրվել մասնակցի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որևէ հիմքի առկայություն, քանի որ մասնակիցը տվյալ դեպքում ի սկզբանե գնման գործընթացի շրջանակում չի ստանձնել որևէ պարտավորություն, որը խախտվել է, կամ թույլ չի տվել պայմանագրով նախատեսված որևէ պարտավորության խախտում, կամ չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, ինչպես նաև չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ընկերությունը գտնում է, որ «ՍիՓիԷսօիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն ներկայացրել է հայտարարություն, որը ստուգվել է սահմանված կարգով և որի իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը հիմք է տվյալ պահին հայտը մերժելու, այլ ոչ թե Ցուցակում ներառելու համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ կետը սահմանում է, որ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Գնման գործընթացին մասնակցելը, որը սկսվում է մասնակցի կողմից հայտ ներկայացնելու պահից, հանդիսանում է մասնակցի իրավունքը: Միևնույն ժամանակ մասնակիցը գնման գործընթացի շրջանակներում ստանձնում է որոշակի պարտականություններ, որոնք ծագում են որոշակի փուլից հետո, մասնավորապես՝ ընթացակարգի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելուց հետո: Մինչև առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելը, մասնակցի կողմից իրականացվող գործողություններն ուղղված են գնումների ընթացակարգին մասնակցության իրավունքի իրացմանը, որի շրջանակներում մասնակիցը դեռևս որևէ պարտավորություն չի ստանձնում:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 3 575 229 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որի հետևանքով Ընկերության կողմից ներկայացված հայտարարությունը որակվել է որպես իրականությանը չհամապատասխանող, համաձայն Օրենքի վերը նշված հոդվածի, Ընկերության կարծիքով, չի հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք, ուստի Ընկերությունը գտնում է, որ «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Անհրաժեշտ է նշել, որ նման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը իր բազմաթիվ որոշումներով՝ մասնակցի ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու կամ «Ֆինանսական միջոց» որակավորման չափանիշը գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար գնահատելու հիմքով մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը քննելիս»:

Միևնույն ժամանակ Ընկերությունը խնդրել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը 23.03.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունը /3 575 229 դրամ տույժի գումար/ առաջացել է 28.02.2018թ.-ին 2017թ. դեկտեմբեր ամսվա ԱԱՀ-ի հաշվարկի ճշգրտելու արդյունքում, որը այնուհետև վերահաշվարկվել և զրոյացել է՝ 07.03.2018թ. նույն ժամանակաշրջանի համար ներկայացված ԱԱՀ-ի հաշվարկը կրկին ճշգրտելու արդյունքում: Այսինքն վերոհիշյալ գրությամբ նաև փաստվում է, որ 3 575 229 դրամ ժամկետանց հարկային պարտավորությունը զրոյացել է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է «ՍիՓիէս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«ՍիՓիէս օիլ Քորփորեյշն», պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 26.03.2018թ. ժամը 11:20-ին հավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

«ՍիՓիէս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն 26.03.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ խնդրել է հետաձգել նիստը և տրամադրել ողջամիտ ժամկետ, որպեսզի Ընկերության շահերը ներկայացնող իրավաբանական գրասենյակը ծանոթանա նյութերին և կարողանա իրականացնել Ընկերության շահերի պաշտպանությունը Խորհրդում:

Խորհրդի կողմից բավարարվել է «ՍիՓիէս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի միջնորդությունը և 26.03.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստը հետաձգվել է:

Ընկերությունը 20.04.2018թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. Խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի

կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, նշված օրենսդրական դրույթից ակնհայտ է դառնում, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե միաժամանակ առկա են երկու պարտադիր տարր՝

1. Մասնակիցը պետք է թույլ տված լինի գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում,

2. Վերոհիշյալ խախտումը պետք է հանգեցրած լինի գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Միևնույն ժամանակ Կարգի 44-րդ կետի համաձայն՝ «...Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Եթե անգամ տեսականորեն ընդունենք, որ ժամկետանց հարկային պարտավորություն ունենալը հանդիսանում է գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում (չնայած Ընկերությունը վերոհիշյալ փաստի դեմ նախկինում ներկայացրել է իր առարկությունը), և «ՍիՓիԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն, ունենալով ժամկետանց հարկային պարտավորություն, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ապա առկա չէ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված երկրորդ պարտադիր միաժամանակյա պահաջը, այն է, որ վերոհիշյալ խախտումը հանգեցրած լինի գնման գործընթացին «ՍիՓիԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն նշվել, Կարգի 44-րդ կետը թույլ է տալիս կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվության պայմաններում մերժել մասնակցի հայտը, եթե պայմանագիրը կնքված չէ:

Մինչդեռ ինչպես նշել է ՀՀ ԱՎԾ-ն՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կ. Թամազյանին 19.03.2018թ. ուղղված թիվ 28-8-417 գրությամբ, 15.03.2018թ. սահմանված ժամկետից ուշ, «ՍիՓիԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ պայմանագիր կնքելուց հետո ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ՀՀ ԱՎԾ-ին ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի, Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 3,575,229 ՀՀ դրամի չափով:

Վերոհիշյալը փաստում է, որ «ՍիՓիԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետագա մասնակցությունը «ՀՀԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին դադարեցված չէ (հայտը չի մերժվել, քանզի արդեն կնքված է եղել պայմանագիր), ուստի և առկա չի եղել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված 2-րդ պարտադիր պայմանը:

Վերոհիշյալը վկայում է, որ այս հիմնավորմամբ առկա չէ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքը, ուստի գտնում ենք, որ առկա չէ նաև «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներարառելու հիմքը:

Տեղեկացնում ենք նաև, որ՝ «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից դատական կարգով վիճարկել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կ. Թամազյանին 19.03.2018թ. ուղղված թիվ 28-8-417 գրությամբ «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի տվյալները ներկայացնելը և վերջինիս «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակ»-ում ներառելու նպատակով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կայացրած որոշումը:

Հայցով «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է նաև հայցի ապահովման միջնորդություն, որով դատարանին խնդրվել է կիրառել հայցի ապահովման միջոց և մինչև դատական գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելն արգելել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին՝ ՍՑ-ԱՄ-2018/35 պաշտոնական ընթացակարգով կատարելու որևէ գործողություն՝ հայցվորին՝ «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին «Գնումներին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով՝ մինչև սույն գործով վերջնական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին տեղեկացնում ենք, որ սույն միջնորդությունը դատարանի կողմից դեռևս չի քննարկվել և դրա վերաբերյալ դատարանի կողմից դեռևս որոշում չի կայացվել:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ Գնումների բողոքարկման խորհրդի կողմից որոշում կայացնելը հետաձգել մինչև դատարանի կողմից «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայցի ապահովման միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելը, ինչի արդյունքում չի խախտվի ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածով երաշխավորված «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի ազատ տնտեսական գործունեությունը:

3. <u>ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 19.03.2018թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ռեգուլյար բենզինի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 06.03.2018թ. առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՍիՓիէս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն: Այնուհետև սահմանված կարգով ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 06.03.2018թ. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /05.03.2018թ./ հարկային պարտավորությունների առկայության վբերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով: Անհրաժեշտ տեղեկատվությունը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված

ժամկետում չի տրամադրվել: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմկերպման» կարգի 44-րդ կետը գնահատող հանձնաժողովը մասնակցի կողմից ներկայացրած հայտարարությունը որակել է իրականությանը համապատասխանող և 14.03.2018թ. ՀՀ ԱՎԾ-ի և «ՍիՓիէս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5-1» բենզինի մատակարարման պայմանագիրը:

15.03.2018թ.՝ սահմանված ժամկետից ուշ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ ԱՎԾ-ին ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 3 575 229 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն հայտնել է, որ ՀՀ ԱՎԾ-ն «ՍիՓիէս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին տեղեկացրել է անհամապատասխանության մասին և տվել է տեղեկատվության ճշգրտման ժամկետ մինչև՝ 17.03.2018թ. ներառյալ: Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների բացակայության մասին ճշգրտված տեղեկատվություն չի ներկայացրել: Համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ՀՎՍՎ թիվ 20 բաժնի կողմից տրված տեղեկանքի՝ Ընկերությունը 16./03.2018թ. դրությամբ հարկային ժամկետանց պարտավորություններ չունի:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 26.03.2018թ. ժամը 11:20-ին հավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/35 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2018/35 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 05.03.2018թ. հայտ է ներկայացրել «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

4. Պատվիրատուն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով (այսուհետ՝ Կարգ) սահմանված կարգով 06.03.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տեղեկատվություն չի տրամադրվել:

6. Նույն արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընտրված մասնակից է ճանաչել «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին և առաջարկել է կնքել պայմանագիր:

7. Նույն արձանագրության 4-րդ կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

8. ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտեի կողմից 15.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 3 575 229 ՀՀ դրամի չափով:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.03.2018թ. թիվ 03/26-3/5176-18 գրությունը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության 19.03.2018թ. թիվ 28-8-417 գրությունը՝ կից փաստաթղթերով և «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի 30.03.2018թ. և 20.04.2018թ. գրությունները, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ (այսուհետ՝ Օրենք) օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին

տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Այսպիսով, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱՎԾ-

ԳՀԱՊՁԲ-2018/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 05.03.2018թ. հայտ է ներկայացրել «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Պատվիրատուն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով (այսուհետ՝ Կարգ) սահմանված կարգով 06.03.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.03.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տեղեկատվություն չի տրամադրվել:

Նույն արձանագրության 3-րդ կետով կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընտրված մասնակից է ճանաչել «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին և առաջարկել է կնքել պայմանագիր:

Նույն արձանագրության 4-րդ կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտեի կողմից 15.03.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն (հայտը ներկայացնելու

օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 3 575 229 ՀՀ դրամի չափով:

Պատվիրատուն 19.03.2018թ. գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով Կարգի 44-րդ կետը գնահատող հանձնաժողովը մասնակցի կողմից ներկայացրած հայտարարությունը որակել է իրականությանը համապատասխանող և 14.03.2018թ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և «ՍիՓիէս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5-1» բենզինի մատակարարման պայմանագիրը, որից հետո 15.03.2018թ.՝ սահմանված ժամկետից ուշ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ ազգային վիճակագրական ծառայությանը ներկայացվել է տեղեկատվություն, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 3 575 229 ՀՀ դրամի չափով:

Վերոգրյալով պայմանավորված, արձանագրում եմ, որ «ՍիՓիէս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում թույլ է տրվել ստանձնած պարտավորության խախտում, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, սակայն միաժամանակ արձանագրում եմ, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը նշված հոդվածի վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե **պարտադիր և միաժամանակյա առկա են երկու հիմքեր՝**

1. Մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն,

2. Վերոհիշյալ խախտումը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Միաժամանակ, Կարգի 44-րդ կետով սահմանվում է, որ «....եթե ***կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ*** կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, ***և <u>պայմանագիրը կնքված չէ</u>, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:***

Այսպիսով, արձանագրում եմ, որ առկա չէ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված երկրորդ պարտադիր միաժամանակյա հիմքի առկայությունը, քանի որ 14.03.2018թ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության և «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի միջև կնքվել է թիվ «ՀՀ ԱՎԾ-ԳՀԱՊՁԲ-2018/5-1» բենզինի մատակարարման պայմանագիր, այսինքն՝ վերոհիշյալ խախտումը չի հանգեցրել գնման գործընթացին «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը, քանի որ Կարգի 44-րդ կետը թույլ է տալիս կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվության պայմաններում մերժել մասնակցի հայտը, եթե պայմանագիրը կնքված չէ:

Ուստի նման պայմաններում գտնում եմ, որ «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.03.2018թ. թիվ 03/26-3/5176-18 գրությամբ «ՍիՓիԷս օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02614085)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ